


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԷԿՈԼՈԳԱՆՈՍՓԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

«Հաստատում եմ»  
ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային  
հետազոտությունների կենտրոնի  
տնօրեն Լ.Վ.Սահակյան

«01» հունվարի 2020թ.



Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

«Երկրաբնապահպանություն» ԻԴ.04.01  
մասնագիտությամբ ասպիրանտուրայի  
ընդունելության քննության

ԵՐԵՎԱՆ- 2020

## 1. Ընդհանուր բնութագիր

- 1.1 Քննական տոմսերը կազմված են 3 հարցերից, տոմսերից բացի կլինեն լրացուցիչ հարցեր
- 1.2 Քննությունն անցկացվում է բանավոր ընթացակարգով
- 1.3 Քննության մոտավոր տևողությունը՝ 45 րոպե
- 1.4 Քննությունն անցկացնում և դիմորդին գնահատում են քննական հանձնաժողովի 3 անդամները:

## 2. Գնահատման չափանիշներ

2.1 Գերազանց (20-18 միավոր) – քննվողը լիարժեք և մանրամասն պատասխանել է ոչ միայն հարցատոմսում առկա, այլև հանձնաժողովի անդամների կողմից տրվող լրացուցիչ հարցերին: Պատասխանները ձևակերպված են գիտական լեզվով, համապատասխան տերմինալոգիայով, առանց բացթողումների, տրամաբանական են և ապացուցելի: Քննվողը կարողանում է տարբերակել էականը ոչ էականից, տալ ներկայացրած տեղեկետության պատճառահետևանքային կապը:

2.2 Լավ (17-13 միավոր) – քննվողը հարցերին պատասխանել է թերի կամ ոչ բավարար, սակայն միևնույն ժամանակ պահել է պատճառահետևանքային կապը: Պատասխանները տրամաբանական են և ճիշտ շարադրված, օգտագործված տերմինները և հասկացությունները տեղին են: Հիմնական սահմանումներում թույլատրելի են 1-2 սխալներ, որոնք քննվողը դժվարանում է ինքնուրույն ուղղել:

2.3 Բավարար (12-8) – տրվել են ոչ լիարժեք, մասամբ թերի պատասխաններ, շարադրման տրամաբանությունն ու հաջորդականությունը խախտված են, բերված հասկացություններն ու տերմինները թերի են, մասամբ օգտագործված են ոչ տեղին: Քննվողն ունակ չէ ինքնուրույն հանգել համապատասխան եզրակացությունների:

2.4 Անբավարար (7-0) – քննվողի կողմից տրվել են թերի պատասխաններ, բերված սահմանումներում առկա են էական սխալներ, շարադրանքն անտրամաբանական է, չի պարունակում պատճառահետևանքային կապ: Բացակայում են եզրահանգումները, քննվողը չի ընկալում այլ դիսդիպլինաների հետ տվյալ առարկայի տրամաբանական կապը, լրացուցիչ հարցերին չեն տրվում կոնկրետ պատասխաններ:

## Հարցաշար

1. Գեոէկոլոգիա (երկրաբնապահպանություն) գիտություն, ծագումը, դերը, տեղը գիտությունների համակարգում, նպատակը եվ խնդիրները, կապը այլ գիտությունների հետ:
2. Շրջակա միջավայրի մասին գիտություն, ծագումը, տեղը, դերը գիտությունների համակարգում, նպատակը եվ խնդիրները, կապը այլ գիտությունների հետ:
3. «Գեոսֆերա», «Էկոսֆերա», «Կենսոլորտ», «նոոսֆերա», «Էկոհամակարգ», «լանդշաֆտ», «շրջակա միջավայր». տալ հասկացությունները, քննարկել դրանց միմյանց հետ առնչության սահմանները:
4. Գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրներ՝ ծագում, պատճառներ, պատմություն, գիտակցում, լուծումներ և պայքար:
5. Կայուն զարգացում, սահմանումը, բաղադրիչները, փոխադարձ կապը:
6. Շրջակա միջավայրի աղտոտման խնդիրներ, դինամիկ և դեպոնենտ միջավայրերի աղտոտման և ուսումնասիրման առանձնահատկությունները:
7. Քաղաքային տարածների էկոլոգիական եվ գեոէկոլոգիական խնդիրները, ուսումնասիրման առանձնահատկությունները:
8. Հանքալեռնային տարածքների էկոլոգիական եվ գեոէկոլոգիական խնդիրները, ուսումնասիրման առանձնահատկությունները:
9. Գյուղատնտեսական տարածքների էկոլոգիական եվ գեոէկոլոգիական խնդիրները, ուսումնասիրման առանձնահատկությունները:
10. Գեոէկոլոգիական քարտեզագրում, մեթոդները, առանձնահատկությունները, կիրառումը:
11. Շրջակա միջավայրի մոնիթորինգ, նպատակը, առանձնահատկությունները: Դեպոնենտ և դինամիկ համակարգերի մոնիթորինգ, առանձնահատկությունները:
12. ԱՏՀ և հեռագնման տեխնոլոգիաների կիրառումը՝ գեոէկոլոգիական և շրջակա միջավայրի հետազոտություններում: Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր:
13. Տարածքի պոտենցիալ տարողունակությունը և լանդշաֆտի կայություն: Ժամանակակից լանդշաֆտի գեոէկոլոգիական կոնցեպցիան:
14. Լանդշաֆտների տարածական պլանավորման վարչական մակարդակները և փաստաթղթերը ՀՀ-ում:
15. Շրջակա միջավայրի և սննդի շղթաների քիմիական ոլակերը, դրանց գնահատման մեթոդները:
16. Բնակչության առողջության գեոէկոլոգիական գործոնները՝ կյանքի որակից, շրջակա միջավայրի որակից մինչև սննդի անվտանգություն:
17. Շրջակա միջավայրի աղտոտիչների թունաբանական բնութագիրը,

թունանյութերի հիմնական տեսակները, թունավորման սկզբունքները:

18. Տարրերի գլոբալ շրջապտույտ, դրանց բնական հավասարակշռությունը և խախտման հետեվանքները:
19. Տվյալների վիճակագրական մշակման հիմունքները՝ դերը գեոէկոլոգիական և շրջակա միջավայրի ուսումնասիրություններում:
20. ՀՀ գեոէկոլոգիական հիմնական խնդիրները և առանձնահատկությունները:
21. Սեվանի հիմնախնդիրը. Պատմություն և ներկա:
22. ՀՀ հանքալեռնային գեոէկոլոգիական խնդիրները և առանձնահատկությունները:
23. ՀՀ քաղաքային տարածքների գեոէկոլոգիական խնդիրները և առանձնահատկությունները:
24. ՀՀ գյուղատնտեսական տարածքների գեոէկոլոգիական խնդիրները և առանձնահատկությունները:

## Հիմնական Գրականություն

1. Родзевич Н. Н. (2003) Геоэкология и природопользования. М М.: Дрофа, 2003. — 256 с.
2. Ясаманов Н.А. (2003) Основы геоэкологии. М, М.: Академия, 2003. — 352 с.
3. Комарова. Н.Г. (2010) Геоэкология и природопользования.М.: Академия, 2010. — 256 с.
4. Перельман А.И. (1999) Геохимия Ландшафта. Учебное пособие. М.: Астерия
5. Сагт Ю.Е., Ревич Б.А., Янин Е.П. и др. (1990) Геохимия окружающей среды. М.: Недра, 1990, 335 с.
6. Янин Е.П. (1990) Введение в экологическую геохимию. М.: ИМГРЭ, 68 с.
7. Алексеенко В.А. (2000) Экологическая геохимия. М.: Логос, 627с.
8. Сагателян А.К. (2004) Особенности Распределения тяжелых металлов на территории Армении. Ер. Изд-во Центр Эколого-ноосферных исследований НАН Р А, 157 с.
9. Environmental monitoring and characterisation (2004) edited by Janick. F. Artiola, Ian I. Pepper, Mark Brusseau, Elsevier, 410 p.
10. Լանդշաֆտային պլանավորման մեթոդական ուղեցույց Հարավային Կովկասի երկրների օրինակով |Երևան/Թբիլիսի. - 150 էջ: Անդրսահմանային միացյալ քարտուղարություն, 2009
11. Антипов А.Н., Кравченко В.В., Симонов Ю. М. и др. Ландшафтное планирование: инструменты и опыт применения. Иркутск. Изд-во Инст. Геогр. СО РАН, 2005.
12. География. общество, окружающая среда. Том II. Функционирование и современное состояние ландшафтов / Под ред. Проф. К.Н. Дяконова и проф. Э.П. Романовой. М.: "Изд. Дом " Городец", 2004.
13. Developing Spatial Data Infrastructures: The Spatial Data Infrastructure (SDI) Cookbook, 2004
14. Кошкарев А.В. Геопортал как инструмент управления пространственными данными и геосервисами. Пространственные данные. № 2 (2008). Изд-во ГИС-Ассоциации. Москва.
15. Стурман, В. И. Экологическое картографирование [Электронный ресурс]: учеб. пособие / В. И. Стурман .— М. : Аспект Пресс, 2003 .— 253 с.
16. Մարդկային զարգացման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ մագիստրանտների համար: Եր., Նոյան Տապան, 2004թ., 318 էջ:
17. www.nature-ic.am «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա, ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիա, ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա:
18. Вернадский В.И. Биосфера и ноосфера. Москва, 1989 г.
19. Глобальные проблемы биосферы. М.: Наука, 2001, 380 с.
20. An Introduction to Nuclear Waste Immobilisation. Second Edition / Ed: Ojovan M.Ի., Lee W.E. Elsevier, 2014. 362 p. (Chapter 2, 4,)
21. Pipoyan D, Stepanyan S, Beglaryan M, et al (2020) Carcinogenic and non-carcinogenic risk assessment of trace elements and POPs in honey from Shirak and Syunik regions of Armenia. Chemosphere 239:. doi: 10.1016/j.chemosphere.2019.124809
22. <http://cens.am/>